ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՊԱՆԱՔԱՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ամաղուի Նորավանքի բակը տապանաքաշտ է*, որ ծածկվել է հողի բարակ սավանով։ Մի ամբողջ պատմություն է ներկում այդտեղ։ Տապանաքարերի արձանագրություններ շատ բան կարող են հուշել։

Վանքի պահապանը Ս. Կարապետի հարավային մուտքի մոտ զգուշությամբ ձեռքով մաքրում է հողը և մեր առջև անսպասելի գծագրվում է կենդանապատկեր, որի շուրջ արձանագրություն է փորագրված. «Այս է հանգիստ պարոն Սարգսի, որ առիւծաբար յաղթէր ի պատերազմունս, որդի Փալկա, ի թիվս ՉՁ (1331 թ.)»[1]։ Արձանագրության մեջ Փալիկ անսովոր անվանը հանդիպում ենք Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու բակում կանգնեցված մի խաչքարի վրա. «Կամաւն աստուծոյ, ես՝ Կուկոր, որդի մեծ Աղթամարին, կանգնեցի զխաչս եղբաւր իմո Փալկա, որ կիւսաւրէ փոխեցաւ ի Քրիստոս թվիս ՉԼԴ (1285)»[2]։ Այս Փալիկը, անշուշտ, Սարգսի հայրն է[3]։ Կուկորը հիշատակում է Աղթամարին։ Աղթամարի անունը կա և իր մորը նվիրված խաչքարի արձանագրության մեջ. «Կամաւն այ ես Կուկոր, որդի Աղթամարին կանգնեցի զխաչս յաղագս մաւր իմո Ափսին, որ երկրպագէք յիշեցէք ի Քս ի թվիս ՉԼԴ (1285)»[4]։ Երկու խաչքարերը իրար կողքի են և ունեն նույն թվականը՝ 1285։

Նորավանքի բակում ընկած է մի ուրիշ խաչքար, կիսաջարդ, այսպիսի արձանագրությամբ.

«Կամաւն այ ես Ալփասլան, թոռն մեծ Աղթամարին կանգնեցի զխաչս որդի իմո Խափլանին, որ[կի]սաւրէ փոխեցաւ ի Քս»[5]։

Ո՞վ է այդ Աղթամարը, որի անունը շառավիղները հպարտությամբ են տալիս։

Ստեփանոս Օրբելյանը, խոսելով Նորավանքի նվիրատուների մասին, գրում է. «Բայց այլ ևս բազում արդիւնս առնեն ի սուրբ եկեղեցին ի բնիկ ազատաց և յընտիր տանուտերաց, որպէս Ախթամարեան զարմքն, որ ի հին ժամանակաց բնակեալ էին յԱռփայ գիւղն՝ տան յիւրեանց հայրենեացն զԴայեկի քարոյ այգւոյ զվերին բաժինն, և այլ յոլով երախտիս ցուցանեն Ախթա-

---

* Տապանագաշտը պեղված է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից։

1 Արձանագրությունը չկա «Դիվանում» (Դիվան հայ վիմագրության, պրակ 3, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1967) և նախորդ հրապարակներում, ուր ընդգրկված են Նորավանքի արձանագրությունները։ Տապանագաշտը ծածկվել է հողաշերտով XIX դարի կեսերից ավելի վաղ։ Վայոց ձորի առաջին տեղագիրը՝ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը, տապանաքարը չի տեսել։ Նրա «Ճանապարհորդությունը», ուր բերված են արձանագրությունները, հրատարակվել է 1858 թ.։

2 Դիվան, պրակ 3, էջ 242։

3 Այս անվանը հանդիպում ենք նաև Ազավնաձորից ոչ հեռու Վերին Ուլգյուրի (գյուղատեղի) գերեզմանատանը, մի տապանաքարի վրա. «Այս է հանգիստ Փալիկին, յաղաւթս յիշեցէք, թվիս ՉԿԸ (1319)» (Դիվան, պր. 3, էջ 39)։ Բայց տեղը և միջավայրը այլ են և պարոն Սարգսի հայր Փալիկի հետ նույնացման եզրեր չեն տալիս։

4 Դիվան, պր. 3, էջ 242։

5 Արձանագրությունը չկա «Դիվանում»։ Խաչքարը հետո է գտնվել։ Այն հանված է փլատակների տակից։

մարն և Արփասլանն և գրեն ինքեանց յիշատակ և պատարագ»[6]։ Դայեկո քարի նվիրաբերական արձանագրությունը փորագրված է Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու գավթում, Սմբատ իշխանի արձանագրությունից հետո.

«Կամաւն այ ի տէրութեան իշխանաց իշխանին Սմբատա և առաջնորդութեան Գրիգորո, ես՝ Ալփասլան [եւ] Մխիթար քահանայ եւ տվի զԴաեկո քարո այգին ի նախավկայս, իւր գլխովն և գետովն։ Գրիգոր և այլ միաբանքս տվին համբարձման աւրն զամեն եկեղեցիքն պատարագ Ը աւր. Ա խումարին, Ե Ալփասլանին, Բ Դամաին։ Կատարիչքն աւրհնին յայ»[7]։

Արձանագրության մեջ չկա Աղթամարի անունը։ Պատմիչը գրում է, որ Աղթամարյան սերնդի մարդիկ իրենց տիրույթներից նվիրում են Դայեկո քարի այգու վերին բաժինը։ Աղթամարյան սերնդից Ալփասլանը (որ ինչպես երևում է Խափլանին նվիրված խաչքարի արձանագրությունից, նրա թոռն է) վանքին տվել է Դայեկո քարի իր ժառանգությունը՝ «վերին բաժինը»։

---

6 Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեալ Մկրտիչ էմին. Մոսկվա, 1861, էջ 267։

7 Դիվան, պր. 3, էջ 219։ Արձանագրությունը հաշող չի ընթերցված, ըստ ընթերցման Մխիթար քահանայի հետ միասին է Ալփասլանը այգին նվիրել, բայց նրա համար պատարագ չի տրված։ Անշուշտ, Մխիթար քահանան նվիրատու չէ, այլ ուրիշ գեր ունի։

Բաղքի թագավորության անկումից հետո Հովհաննես եպիսկոպոսը՝ Բաղաց իշխան Հասան-Համտոմյանի որդին, հաստատվում է Նորավանքի անապատում, Հրասեկաբերդի մոտ, ուր կանգնած էր Ս. Կարապետ եկեղեցին «ի խորաձոր անապատին Նորավանից, մերձ անառիկ դղեկին Հրասեկայ բերդոյն. առ հիազոր և մեծասքանչ եկեղեցւոյն սրբոյ Կարապետին»։ Նա ցանկապատում է վայրը և եկեղեցու համար կալվածքներ վերցնում շրջակա գյուղերից. «Եւ առնու ի սահմանակցածն հողս և անդաստանս ի ժառանգութիւն եկեղեցւոյն»[8]։ Դա դուր չի գալիս Հրասեկի բերդակալին, որ Խորասանի խագրիկ էր։ Հովհաննես եպիսկոպոսը Պարսկաստանի Մահմուդ սուլթանի ձեռնտվությամբ ավերում է Հրասեկը։ Որոշ ժամանակից հետո այն վերաշինվում է և բնակեցվում սելջուկներով և ահա, Իվանե աթաբեկի հրամանով, Հրասեկը վերստին ուժով վերցվում է Աղթամար Արփայեցու և Վասակ Խաչենացու կողմից, որ ապա տրվում է Լիպարիտ Օրբելյանին՝ «հայրենեացն փոխան». «Եկի առ մեծ աթաբեկ Իվանէ, և հայրենեացն փոխան երետ զՀարոշկաբերդ իւր կերովս, և ես շինեցի ղվանքս, որ կոչի Նորավանք»[9]։

Արձանագրությունը թվագրված է ՈՀ=1221 թ.։ Հրասեկաբերդի առումը տեղի է ունեցել 1221 թ. մեկ տասնամյակ առաջ։

Իվանե աթաբեկի զորաբանակները XIII դարի սկզբին թուրք սելջուկներից ազատագրում են Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները և Սյունիքը։ Նրան գործակցում են Խաղբակյան և Օրբելյան տոհմերի ներկայացուցիչները, Շահումեցիք, Մահևանյանք, Հասան-Համտոնյանները (որոնք Բաղաց կամ Կապանի արքայական տան շառավիղներն էին) և Աղթամարյանները։ Աղթամար Արփայեցու զինակիցը՝ Վասակ Խաչենացի Խաղբակյանը իր որդիների հետ շատ բան ներդրեց Վայոց ձորի, Բջնիի և Դվինի ազատագրության գործում. «Եկեալ ի Խաչենոյ բազում արիութիւնս ցուցին»,—գրում է պատմիչը[10]։ Այս Վասակ Խաչենացու որդի Պռոշից է սկիզբ առնում Պռոշյան նշանավոր տոհմը։

Այսպես, Փալիկի որդի պարոն Սարգիսը Աղթամար Արփայեցու՝ Իվանե աթաբեկի զորահրամանատարներից մեկի և Վասակ Խաչենացու թոռն է, Աղթամարյան, «ընիկ ազատներից ի ընտիր տանուտերերից»։

Այս ամենը վերաբերում է Սարգսի տոհմաբանությանը։ Իսկ նրա մասին հիշատակություն պահպանվել է Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրության» մեջ։ 1282 թ. մեռնում է Աբաղայը՝ առաջին մկրտված Հուլաւյանը։ Նրան փոխարինում է եղբայրը՝ Թագուդարը՝ առաջին թլպատված Հուլավյանը, որ իրեն վերակոչում է Ահմադ։ Աբաղայի որդու՝ Արղունի և Ահմադի միջև սկսվում է գահակալական պայքար։ Ահմադը մեծ զորքով գալիս է Խորասան «առ ի բառնալ զժառանգ թագաւորութեանն զԱրղունն»։ Առաջապահ մի գունդ բախվում է Արղունի մարդկանց հետ և պարտվում։ Բայց «սակավաձեռն գոլով Արղունն փախստեայ լինի և անկանի յամուր մի անառիկ»։ Նա խնդրում է հաշտություն։ Ահմադը խաբեաբար համաձայնվում է և պահանջում պատգամավորներ։ Արղունն ուղարկում է Սարգիս զորավարին։ Ահա ինչպես է նկարագրում պատմիչն այդ դրվագը.

«Մեծ զորավարն Սարգիս ՝բազում ընծա/յուք ելանէ և գա առ նա։ Եւ իբրև մերձեցաւ, /ձեռս/ ի յետս կապեցին որպէս մահապարտ և այնպէս ածին ի դուռն արքունի, ապա ժողովեցան ամենայն բազմութիւնք անթիւ ղաւրացն ի տեսութիւն աննման գեղոյն և ււտար պատկերին։ Ի նոյն ժամուն հրամայէ փողոց կարգել բազմութեան և անցուցանէին զանմեղ մանուկն ընդ մէջս և միաբան գոռացին ահեղ աղաղակաւ. «մօրէ», «մօրէ», այսինքն թէ՝ յաղթեցաք։ Եւ էր ամենեցուն ի ծածուկ սրտի սուգ և յակն արտասուս։ Առեալ տանէին ի

8 Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 348։

9 Դիվան, պր. 3, էջ 211։

10 Մխիթար Այրիվանեցի, էջ 65։

կողմն մահապարտաց և նստուցանէին միայն, և ի բացեալ բազում արք պահակ լինէին, և ինքն իմացեալ զորպէս որս վայրի ողորմ դիմօք այսր անդր ակնարկէր։ Իսկ Ահմադն առեալ զյաղթութիւն և պանծացեալ յանձն, դառնայ և յառաջէ ընդ զօրսն և հրամայէ բերել զնա զկնի, զի կամէր առ գեղեցիկ հարճն իւր հասուցանել և առաջի նորա սպանանել վասն իւրոյ սաստիկ չարութեանն։

Նույն գիշերը, սակայն, Արղունի զորքերը հարձակվում են, կոտորում Ահմադի դինվորական ավագանուն, իսկ մյուսները անցնում են Արղունի կողմը։ «Որ ոչ հնազանդէր սպանանէին»։ Սարգիսն ազատվում է՝ «հանեն ի կապանացն»[11]։

Դրվագը վերաբերում է 1284 թ. (ի ՉԼԴ թուին)։ Պատմիչի նկարագրությունից երևում է, որ Սարգիսը երիտասարդ է, նրան կոչում է «անմեղ մանուկ», նայում են նրա «աննման գեղոյն և աւտար պատկերին», ուրեմն պետք է որ 20—25 տարեկան լիներ։ Պարոն Սարգիսը մահացել է 1331 թ. նոր անցած վեց տասնամյակի սահմանները։

Խարդավանքով գերված Սարգիսը անշուշտ նույնն է Սարդիս Աղթամարյանի կամ Փալիկի որդի պարոն Սարգսի հետ։

Հուլավու առաջին տիրակալների՝ Աբաղայի և Արղունի նկատմամբ քրիստոնյա բնիկ իշխողները համակրանք էին տածում և գործակցում էին նրանց հետ։ Աբաղայի բանակում հայկական զորքերի սպարապետ էր Պռոշ իշխանը՝ Վասակ Խաչենացու որդին, նրանց բարյացակամությունից օգտվում էր Սմբատ Օրբելյանը, և բոլորովին անբնական չէ, որ Աղթամարի թոռը՝ Սարդիս զորավարը, լիներ նրանց հետ։

Պարոն Սարգսի մասին ուրիշ տեղեկություններ չկան կամ մեզ հայտնի չեն։ Շատ ավելի խոսուն են տապանաքարի արձանագրությունը և կենդանապատկերը։

Առյուծը կանգնած է հետին ոտքերի վրա, աջ թաթը քունքին։ «Մտածողը,—անմիջապես զուգորդություն է առաջանում, «Մտածողը»։ Եթե այս ստեղծագործությանը նախորինակ փնտրենք, որոնումը մեզ կտանի հեռավոր անցյալ, Ասուրբանիպալի պալատի բարձրաքանդակները, մ. թ. ա. 665—635 թթ.։ «Վիրավոր առյուծ»՝ նետերը մխրճվել են մարմնի մեջ, բերանից արյուն է հոսում, կանգնած է իր ամբողջ վեհությամբ և ողբերգականությամբ։ «Մեռնող առյուծ»՝ մեծ լարումով իրեն պահում է առաջին ոտքերի վրա, իսկ մարմինը ընկած է կաթվածահար։ «Սպանված առյուծ»՝ նետահար փռվել է անկյանք, մարմինն ու մկանները թափված են իրար վրա և... «Խորհող առյուծ»։ Հին Արևելքի մարդն այնպես գիտե այդ վեհապանծ գիշատչին, ինչպես Վերածննդի քանդակագործը՝ մարդուն։

Հին ասորեստանյան բարձրաքանդակների հետ միայն զուգորդություն է առաջանում, իսկ նախորինակի համար պետք չէ հեռուն գնալ։ Նորավանքի Սմբատի դամբարանում հանգչում է Էլիկումը, Սմբատից ոչ հեռու։ Նրա տապանաքարին նույնպիսի փորագրություն կա՝ առյուծակերպ մարդ.

«Թվիս ՉԽԹ (1300) զգեղեցկատիպն Էլիկում, որդի մեծի Տարսաիճին, որ առիւծաւրէն խրոխտ մռընչէ ընդդէմ այլասեռ գնդին, աղաչեմ յիշել յաղաւթքս»[12]։

Առյուծը հին աշխարհի համար սարսափելի էր։ Նա ավերող ուժ էր և կերպավորում էր չարը, որին պետք էր հաղթահարել։ Այդպես է և «Սասնա ծռեր» էպոսում, որի երկրորդ ճյուղում ժողովուրդը գալիս լցվում է տասնհինգամյա Մհերի մոտ և խնդրում.

Մեկ առյուծ է լույս ընկե.
Երբ սար չութի երթանք՝ մեզ կուլ կըտա.
Էդոր համար հացի պակաս
Ու Բանկություն ընկավ աշխարհք։

---

11 Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի. Երևան, 1942, էջ 29։

12 Դիվան, պր. 3, էջ 237, նկ. 248։

Մահերը հարցնում է.

— Առյուծն ի՞նչ է, իմա՞լ առյուծ։

— Գաղաններու չոչն է առյուծ, մարդիկ կուտի։

Մահերը հաջորդ օրը մարտի է բռնվում առյուծի հետ և հաղթահարում նրան.

Մահեր կանչեց հացն ու գինին, տեր կենդանին,
Կանչեց մի ձեռ թալեց էդ առյուծի վերին ծնոտ.
Մյուս ձեռ թալեց ներքի ծնոտ.
Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,
Արեց էնոր էրկու կտոր։
Մեկ դրեց ճամփու էս դին, մեկ էլ՝ էն դին[13],

Այդպես է բացվում ճանապարհը։ Դա հաղթահարման ուղին է։

Առյուծը բացասական ուժ էր V դարի մատենագիրների մոտ. «Գոչեաց իբրև զառեւծ զայրագին, և հանեալ զսուսերն՝ գազանաբար յարձակեցաւ ի վերայ երանելեացն»,—նկարագրում է Եղիշեն Դենշապուհ մոգպետի կատաղությունը[14]։

Եղիշեն իր Պատմության մեջ, որ ամբողջովին նվիրված է հերոսության և քաջության, առյուծի հետ համեմատության ուրիշ օրինակ չի բերում։

«Մանչեալ առիւծաբար գազանութեամբ Անտոնիոս...»[15],—գրում է Խորենացին, նույնպես նկատի ունենալով բացասական կերպար։ Բուզանդի մոտ կա նման մի ձև՝ «գազանաբար-առիւծաբար»[16]։ Հին Կտակարանը դաժանության և վրեժխնդրության գաղափարի համար դիմում է առյուծին։

Բայց շուտով կերպարի մեջ շեշտվում է արիությունը. «Յորժամ ասեմք զտատրակ ի բնութենէ ողջախոհ և զուղտ խոհեմ և զառիւծ արի և զարագիլ արդար, վասն զի զծերացեալ հայրն կերակրէ»[17],—կարդում ենք Դավիթ Անհաղթի մոտ։ Իսկ հետագայում այն ստացավ միայն դրական իմաստավորում։ Առյուծը կերպավորում է մարդուն. և ապա՝ մարմնավորում նրան։ Այդպես է արդեն Մահերը Թումանյանի մոտ.

Առյուծ-Մահերը զարմով դյուցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն։

Առյուծ և Մահերը կամ առյուծաձև Մահերը դառնում է առյուծակերպ Մահեր, առյուծակերպ Մահերը՝ Առյուծ-Մահեր։

Էլիկումի և Սարգսի հուշարձանները երեք տասնամյակով են միայն բաժանվում իրարից։ Եթե վարպետը մեկ չէ, ապա, անշուշտ, նույն դպրոցն է։ Մարմնի դիրքը, շարժումը, պոչի գալարումը, ինչպես և կոմպոզիցիան առհասարակ հիշեցնում են միմյանց, բայց մի դեպքում առյուծակերպ մարդ է, մյուս դեպքում՝ առյուծ-մարդ։ Շատ ժամանակ էր պետք, որպեսզի կերպավորումն առաջին շրջանից անցներ երկրորդին, բայց հաջորդ փուլերում ճանապարհը կարճ է կամ ձգվում է հատվելով իրար։ Ե՛վ Էլիկումի և՛ Սարգսի համար քաջության հետ շեշտվում է և տեսքը՝ «գեղեցկատիպն» (Էլիկում), կամ՝ «անման գեղ դիմոյ» (Սարգիս)։ Առյուծը մարմնավորում է ոչ միայն արիություն, այլև վեհություն ու գեղեցկություն։

Նորավանքում կենդանապատկերը պատահական չէ։ Առյուծը Օրբելյանների տոհմական խորհրդանիշն էր։ Պատմիչը հաղորդում է, որ Օրբելյանների նախահայրը իրավունք ուներ կրելու առյուծագլուխ գավազան։ Եվ պատմիչի մոտ, որ նույնպես Օրբելյան է, առյուծը լրիվ դրական կերպավորում ունի։ Լիպարիտ Օրբելյանը մենամարտի է հրավիրում թշնամիներին. «Փչէր գոռայր

13 Սասունցի Դավիթ, Երևան, 1961, էջ 105—106։

14 Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 177։

15 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 138։

16 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883 թ., էջ 134։

17 Դ ա ւ ի թ Ա ն յ ա ղ թ. Սահմանք իմաստասիրութեան. Երևան, 1960, էջ 90։

իբրև գաւիւծ, խնդրէր ի նոցանէ մենամարտիկս և ասէր. ես եմ Լիպարիտն Ափխազաց, եկայք քաջքն Պարսից և Արեաց և նախամարտեսցուք ընդ միմեանս»[18]։

Առյուծը տապանաքարին կանգնած է ամբողջ հասակով, ձախ ձեռքը քըմ-բին՝ խորհող աղյուծ։

Զուգամիտվում են իմաստությունն ու արիությունը։ Կառավարման խոր-հրրդավորումն է դա։

НОВОВЫЯВЛЕННОЕ НАДГРОБИЕ

Доктор филол. наук А. А. МАРТИРОСЯН

Резюме

Во дворе монастыря Амагу-Нораванк во время строительно-восстановительных работ под тонким слоем земли были обнаружены надгробия, одно из которых выделяется прекрасным рельефным изображением льва и надписью—«Сие покой парона Саргиса, побеждавшего в войнах подобно льву, сын Фалка, в год 1331». В статье сделана попытка выявить личность парона Саргиса. Он был внуком Ахтамара Арпаеци, сподвижника атабека Иванэ Закаряна. В борьбе за престол между Аргуном и Ахмадом Хулавидами парон Саргис вместе с Тарсанчем Орбеляном выступал на стороне Аргуна Хулавида, известного своим расположением к христианам. В статье говорится также об изображении львов как зооморфном мотиве армянских рельефов.

---

18 Ստեփաննոս Օրբելեան. Պատմութիւն նահանգին Սիսական, ՍՊբ, 1859, էջ 121։